

Եցուեր է ծովուն մէջ 60 ոտք բարձրութեամբ , որ հիմայ նաւահանգստին մեծ ամրութիւն է . բայց ծովուն տակը բոլոր լաւան տարածուած ըլլալով՝ յատակը բարձրացած է , որով մեծ նաւեր նաւահանգիստը չեն կրնար մտնել : Քաղաքիս գլխաւոր վաճառքն է բամբակ և մետաքսէ կերպասներ : Քաթանայի քովի երկիրներէն կ'ելլեն , ցորեն , գինի , կտաւ , ձէթ ու մետաքս : Շնակչաց թիւն է 45,000 :

Մեր հոս դրած պատկերին աջակողմը երեցած շէնքը՝ Քաթանայի բերդն է , որ անցեալ տարի Խիկիլոյ խոռվութեանցը պատճառաւուը շատ վտանգեցաւ :

—***—

ԽԱՂԱՔԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Բ .

Խառաւուրահաւ , Փէշ , Խթէ Հարք :

Տեսւանէսք զթագաւորական հաւորոյ տեսակն ցանկալի էր , զի ընդ գեղնագոյն փետուրմն փոքր ինչ կանաչութիւն համուարխառնեալ արտաքս ձողձնայր , և լանջուցն կարմրանիշ գոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առմիմեանս պատուածեալ , և նման գարնանային առաւօտու ցողոյ կայլակը յանդաստանս զոսկեծայր քսախց մարդարտաձեւ 'ի վայր կախեալ բոլորովիմք . այսպէս և բիբք աչացն , որ և սոնքաձեւ կտցոյն փողորտաձգութիւն 'ի վայր կոյս գարձեալ զբերանովքն կռանայր , որում բոլորատեգ զեղսն ծայր՝ իբրու գնդանաց ցցեալ զբարգաւանգ ճռուղումն ձայնի՝ ըստ մարդկային բնութեանս խօսից ստէպ ստէպ առ բան հողովէր : Եւ սա զօր օրինակ յառաջինսն անդ Աւրոնի ումեմն կայսեր 'ի սենեակն լինէր գովող , այսպէս 'ի վերջնումն աստ յոգնաբաստիկ իշխանիս մերոյ ' տեսաք օրհնիչ :

1 Ֆուանշերի :

Ինդ որ թէպէտ առաւելասքանչ զարմացաք՝ սակայն ոչ այնչափ զոր հանդերձեալ եմասել . զի յորժամկամէր յորսինչ ելանել կամ 'ի զբօսանս խաղու , տեսանէաք 'ի յելս արքայացու կազմութեան՝ արտաքոյ պարսպին 'ի նախադրան համապարհին որպէս առն թագաւորի յերկրպագութիւն եկեալ՝ անարի , անբարի , անհեղեղ կենդանին վիմահասակն փիղ , որոյ գերանաձեւ սըրունքն որպէս լեառն ինչ 'ի վեր բարձեալ ունէին , և զխելապատակէ անտի ըստ չարաթոյն սողնոյ նմանութեան 'ի վայր կոյս կախեալ ձեանայր պատիճ , զոր առ գետնովն շրջը լծելով , այսր անդր ստէպ ստէպ գարձուցանելով , և ուղղորդաձեւ 'ի վեր կանգնելով , և մերթյինքն քնթունեցուցանելով . և նա ուժգնակի մանչմամբ զտուրեառութիւն շընչոյն ընդ խոռոչափողն արտաքս հոսելով . արդարեւ ասեմթէ իբրև բեհմութշարժնոյն զիխոյ , ահաբեկ զարհուրումն լինէր դողութեամբ բնութեան մարդոյ :

Տեսանէաք և զերիվարս ածեալ սիգասարք պերճասոսարդք , Ճեմողք , Ճեպողք և ևս ճախրասլացք , որք հողմավար թեթեւութեամբ զարշաւանս առնէին , ոսկեսանձ թամբք , և գեղեղեալ զինուք :

ՄՈՎՍԻՍ ԿԱՂԱԿ :

ՏԵՍԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՂ. ՁՈՒԹԻՒՆ

ՈՐ ԱՐԱՐԱՏԻՒՆ :

Դիմութարամարս ուտելեաց մէջ զլիսաւորներն են անուշ բաներ , ահաս և թթու պտուղներ , որոնք նոյն օրուան մէջ կերուած ուրիշ բաներն ալ մարսելու շատ նեղութիւն կուտան : Դակ շատակերութեամբ՝ ինչ և իցէ բանով ալ որ ըլլայ ստամբուր ծանրացընելը միշտ մնասակար է . վասն զի կամ փախուք կուգայ անմարսողութեամբ կամ սաստիկ ստամբուրի ցաւ , ուսկից նաև ա-

ռաջ կուգան փորի ցաւեր , տեսակ տեսակ թերմեր և ուրիշ այլ և այլ հիւանդութիւններ : Այսափ մարդիկ կը մեռնին միայն անժուժկալ կերտիսումի պատճառաւ մը . և ճշմարիտ է իրաւցընէ ան հին առակը թէ շատ աւելի մարդ կը սպաննէ որկորը քան թէ ուրը :

Երբոր մարմինը մարսողութենէ սկսի տանջուիլ , կարծէս թէ մարմնոյն բոլոր կենդանական զօրութիւնը կը ժողվուի ստամոքսին վրայ՝ մարսողական զօրութեանը օգնելու , և այն ատեն վնասակար է առողջութեան ինչ և իցէ արտաքին մեծ աշխատանք կամ մտմտուք . այս պատճառաւ է որ վարպետները մէկ ժամ՝ մը կամ աւելի հանգստեան միջոց կուտան տղոց կամ աշխատաւորաց՝ կերակուրէն վերջը : Ի՞նը գիտցող մարդը ոչ երբէք իր չափէն աւելի կ'ուտէ . վասն զի լաւ գիտէ թէ մարդու այնչափ ուտել և խմել պէտք է որով որ անօթութիւնը և ծարաւը անցրնէ . չխաբուիր ան մարդկանց խօսքերէն , որ շատակերութիւնը աղէկ մնունդ առնելու և ուժով կազմուածք ունենալու պատճառ կը սեպէն . վասն զի չափէն աւելի կերուածը՝ չէ թէ միայն ուժ չտար , հապա շատ անգամ անմարսողութիւն պատճառելով շատ տեսակ հիւանդութեանց դուռ կը բանայ : Անդարար և դիւրամարս կերակուրները ընդհանրապէս ասոնք են . հաց , ալիւրեղէն բաներ , փոխինդ , ընդեղէն , բրինձ , գարի , պտուղ , կաթ , ձուկ , թուզուն , եղան , հորթու , խոյի , այծու , նապաստակի , և ուրիշ անտառաբնակ կենդանեաց միար . որոնք բաց՚ի քանի մը տեսակ պտուղներէն և կանաչեղէններէն՝ թէ որ լաւ կերպով եփուին , դիւրաւալ կը մարսուին . Պատուղները , ընդեղէնները , աղցանները , և ան տեսակ ապուրներ որ կանաչեղէններով և ալիւրով խառնած են , ձկան մը սին չափ սննդարար չեն . անտառաբնակ կամ ընդհանրապէս կենդանեաց մարդկանի կը մարմնուածք աղամարդ կամ մարմնուածք մը սիրութիւններէն աղամարդ կը մարմնուածք աղամարդ է :

Այս , մնրացորենի փոխինդ , իմորեղէն ընդեղէն և պտղեղէն բաներ ուտեն . իսկ մնեղէն քիչ , վասն զի միշտ մնեղէնի յաձախութիւնը վնասակար է :

Ուտելու համար ժողված խոտեղէններու մէջ զգուշութեամբ նայելու է որ թունաւոր և վնասակար խոտեր չզտնուին , որ թէ կենաց վնաս կ'ընեն և թէ մարսողութեան , ինչպէս է մոլախինդը և ուրիշ քանի մը տեսակ խոտեր : — Առնկերուն ամէն տեսակն ալ դժուարամարս են , և ոմանք թոյնէն աւելի կը չարչարէն : Հասուն գետնախնձորները շատ առողջարար են . խիստ եղոտ մնեղէնները , կծու , աղոտ , և շատ համեմոտ կերակուրները այնչափ առողջարար և դիւրամարս չեն . պանիրի ալ շատ գործածութիւնը տեսակ տեսակ հիւանդութեանց պատճառ կ'ըւլայ : Անուշեղէն և խմորեղէնները գրեթէ ամէնն ալ ստամոքս կը թուցըննեն և տկարացըննեն . ծնողք պէտք է ջանան որ տղաքնին պղտիկուց վարժեցըննեն ամէն տեսակ կերակուրի նաև հասարակ բաներու , վասն զի պարզ կերակուրները ամեննէն օգտակարներն են :

Կերակուր եփելու կամ տաքցընելու ամանները , և պղնձեղէն անօթները , միշտ պէտք է որ լաւ կլայեկած ըլլան , նոյնպէս հողէ ամաններն ալ լաւ վեռնիչոտ : Այ անոր որ պղնձէ ամանի մէջ պաղեցուցած կերակուր ուտէ . ատենով կօշկակարի մը կնիկ պղնձէ ամանի մը մէջ քիչ մը սալորի տապկոց եփելէն վերջը , կաթսան աւազանին քովը թողով կ'երթայ իր դրացինն տունը հարկաւոր բանի մը համար . նոյն միջոցին երիկը անտեսուն մտնելով կը տեսնէ որ ան կաթսային տակը քիչ մը եփածէն մնացեր է , մատովը կը սկսի քերելուտել , և վերջը դանսակով կպածները քերթելով կ'ուտէ կը լըմընցընէ : Երբոր կնիկը տուն կը դառնայ , կը տեսնէ որ խեղճ՝ երիկը սաստիկ տաքութեան և ցաւերու մէջ կը տանջուի , մէկէն գաղջ ծրի մէջ քիչ մը ձէթ լեցընելով կուտայ անոր որ խմելով սիրութետերէ . բայց մարդը որ ամէն հիւանդու-

Թեանց դեղ օղին կը սեպէր , բաց ՚ի գաւաթ մը օղիէն ուրիշ բան չխմեր : Հազիւ ժամ մը կ'անցնի վրան , խեղջին ցաւերը այնպէս կը սաստկանան , որ կը յուսահատին կենացը վրայ . կնիկը կը վաղէ բժշկի . առտուն բժիշկը կը հանի , բայց կօշկակարին մարմինը ինչուան ան ատեն սաստիկ ուռելով , քիչ ատենէն կը մեռնի : Խեղջ կինը կուլար յուսահատաբար , բժշկին ալ մեծ ցաւեղաւ , տեմնելով որ ասոր մահուանը պատճառ պարզ որկրամոլութիւնը և տղիտութիւնը եղեր է . վասն զի սալրին թթուութենէն ժանդառ կապելով անօթը թունաւորեր է . վերջն ալ խմած օղին աւելի վնաս ըրեր է և մահը շուտով հասուցեր է :

Բմպելեաց մէջ մէկհատիկ առողջարան է ջուրը , որ թէ կը զովացընէ , թէ թեթևութիւն կուտայ , և թէ միշտ մարդուս գէշ արիւնները կը մաքրէ , մէկ խօսքով ստամքսի , աղեաց և ջղաց զօրանալուն մի միայն օգտակար դեղ է : — Խնոնք որ սովորութիւն ունին ամէն օր խահուէ , կաթ կամ ասոնց նման տաքցուցիչ ըմպելիքներ խմելու , այսպէսով արիւննին շատ կը տաքցընէն , և գրեթէ ամէն ոգեղին ըմպելեաց յաձախութիւնը վնասակար է : Տղաքը պէտք չէ վարժեցընել որ խահուէ խմեն , ևս առաւել ուրիշ ոգեղին ըմպելիք՝ որ թոյնէն աւելի կը վնասեն անոնց մատաղ հասակին : Ով որ գինին զուտ կը խմէ՝ առանց քիչ մը ջուր խառնելու , շատ անգամ սաստիկ տաքութեն և շնչարգելութեան մէջ կ'իյնայ , և քանի քանի զործաւորներ կը մեռնին , անյագաբար ջրի տեղ շատ անգամ գինի կամ օղի խմենուն պատճառաւ :

Կատ վնասակար բան է ջերմուտներու կամ ձնի ունեցող տղոց դեղի տեղ պղպեղով խառնած օղի խմելու . խորունկ ձմեռուան մէջ ձիւնապատ տեղեր բնակող կամ քալողներն ալ պէտք է զգուշանան աս ըմպելիքին , որ ցրտէն աւելի մեծ վտանգի մը չհանդիպին :

ԲՆԱԿԱՆ ԳՐՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինուոյ ու էենդանէաց աշխարհէ աշխարհ աեղակութեանը :

ԵՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՈՒԽԻՍԻՓԻ գետը զարմանալի երեսյթներ ունի դիտելու արժանի : Ուծամեծ միրիկներէ ու ջրերու յորդութենէ շատ անգամ կը հանդըպի որ լեռներու վրայի մեծամեծ ծառերն ու անտառները կը խլուին , ու ջրերու բռնութեամբ կը քշուին ձորերու մէջ , բայց անոնցմէ շատն ան խուվութեան ատենը կը թաղուին հողի ու աւազի մէջ . շատն ալ կան որ ՈՒԽԻՍԻՓԻ փինս երեսէն քշուելով չափաւոր տեղ մը երթալէն ետքը կ'արգելուին կը մընան . ասանկ դիպուածի մէջ յայտնի է որ ձամբան գոցուելով վերէն եկածնորանոր փայտի կտորուանքը , խոտն ու տերելը , ծառի ձիւղերը , կենդանեաց սատակներն , փրփուրը , և այլն , առջի արգելուած ծառերուն վրայ իրենք ալ կ'արգելուին կը մնան , և քանի կ'երթայ իրարու հետ կը խառնուին : Խամանակ անցնելով փոթորիկներէն վերացած հողն ու աւազը կը լեցուի ասոնց վրայ , որ հարկաւ ջրին տակը չեն կրնար իջնալ , և քանի կ'երթայ կը թանձրանան ջրին վրայ կեցած մարմինները ու կամուրջի պէս տեղ մը կը ձեւանան , որուն վրայէն երկրցիք կրնան անցնիլ դառնալ , որուն Ումերիկացիք իրենց լեզուով Ուաֆի կ'ըսեն : Եւ որովհետեւ ջրին երեսը կեցած են աս դիզուած նիւթերը , հարկաւ ջրին բարձրանալու ու ցածնալու ատենը կը բարձրանան ու կ'իջնան : Խակ եթէ ուրիշ անգամ ալ հանդըպի որ դարձեալ լեռներէն յորդ ջրերուն կոխելովը աս արգելած փայտերը խլուին , կ'երթան խուռան ծով :

Հոս դիտելու բան մը կայ որ ՈՒԽԻՍԻՓԻ ջրերուն սկզբնաւորութեան ձո-